

ՕՐԷՆԸ ՔԱՌՆԹԻ Ս. ՔԱՌԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑՈՅ  
ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ

**ԱՅՍ ԵԿԵՂԵՑԻՆ ՆՈՐ ՅՈՐԴԱՆԱՆ ՄԸ ՊԵՏՔ Է ԴԱՌՆԱՅ  
ԲՈԼՈՐԻՍ ԶԱՄԱՐ, ՔՐԻՍՏՈՍԻ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՄԲ ՉՕՐԱՑԱԾ**

**ՊԱՏՊԱՄԵՑ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆ ԶԱՅՐԸ**

Կիրակի, 26 Մարտ 2006-ին, Օրենք Քառնթիի հայ գաղութը ապրեցաւ հոգեյոյզ եւ օրհնաշատ պահեր, երբ Առաջնորդ Սրբազան Զայրը՝ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Սրբոց Քառասնից Մանկանց տօնին եւ եկեղեցւոյ անուանակոչութեան առիթով, հանդիսաւոր սուրբ պատարագ մատոյց եւ հաւատքի ամրապինդ ու հոգեթով իր քարոզով շեշտեց աղօթքին անհրաժեշտութիւնը հայ անհատին թէ ընտանիքին, հայ համայնքին ու ազգին կեանքէն ներս, իբրեւ աղբիւր վերանորոգութեան, հաւատքի ամրապնդման եւ Աստուծոյ հետ հաղորդակցութեան:

Առաջնորդ Սրբազանը, վկայակոչելով 4-րդ դարու սկիզբին հաւատքի նահատակներուն՝ Սրբոց Քառասնից Մանկանց կեանքի ու վճռակամ նահատակութեան նուիրուած շարականը, ըսաւ, որ Սեբաստիոյ լիճը երկրորդ Յորդանանի վերածուեցաւ, ուր Քրիստոսի ներկայութիւնը ապրող հաւատքի զինուորները իրենց նահատակութեամբ փառաց պսակին արժանացան: Այսօր եւս, շեշտեց Սրբազան Զայրը, Օրենք Քառնթիի եկեղեցին Նոր Յորդանան մը պէտք է ըլլայ բոլորիս համար, ուր մեր ուխտը պէտք է վերանորոգենք, մեր սիրտն ու հոգին աղօթքով մաքրենք եւ մեր հայրերու հաւատքով գօտեպնդուած՝ այս գաղութը պահենք միասնական ճիգով, փոխադարձ սիրով ու յարգանքով եւ գործակցութեամբ:

Առաջնորդ Սրբազանը իր քարոզին մէջ ողջունեց Ազգ. Առաջնորդարանի Քրիստոնեական Դաստիարակութեան Բաժանմունքի Վարիչներուն՝ Զայր Միւռնին եւ Զայր Պարթեւին ներկայութիւնը, որոնք Սուրբ Սեղանին կը սպասարկէին: Ողջունեց եկեղեցւոյ Զոգեւոր Զովիւր, Ազգային Վարչութեան ներկայացուցիչները, նախկին եւ այժմու հոգաբարձուները, բարերարները, Տիկնանց Միութիւնը, եկեղեցւոյս սպասարկուները, գաղութին կազմակերպութիւնները, դպրոցի Տնօրէնութիւնը եւ յարակից մարմինները:

Ս. Պատարագի աւարտին եւ հոգեհանգստեան արարողութենէն ետք, Սրբազան Զայրը, շրջապատուած հոգեւորականաց եւ դպրաց դասերով, թափօրով առաջնորդուեցաւ եկեղեցւոյ կողքին գտնուող »Ղուկասեան« սրահը, ուր, հաւատացեալներու խիտ բազմութեան ներկայութեամբ, օրհնեց եկեղեցւոյ անուանակոչութեան տօնին առիթով պատրաստուած Մատաղը: Մատաղօրհնէքի աւարտին, ներկաները յուզումով եւ խանդավառութեամբ երգեցին «Կիլիկիա»ն եւ «Մեր Զայրենիք»ը:

Աւելի քան 450 հաւատացեալներ միասնաբար ճաշակեցին Տիկնանց Միութեան պատրաստած մատաղը: Սիրոյ այս ճաշի ընթացքին ներկայացուեցան նորակազմ հոգաբարձական կազմի անդամները, ապա եկեղեցւոյս Զոգեւոր Զովիւ՝ Արժ. Տ. Զրանդ Քհնյ. Երեցեան, եկեղեցւոյ ընտանիքին անունով իր որդիական սերն ու շնորհակալութիւնը յայտնեց

Առաջնորդ Սրբազան Հօր, եւ յիշեցուց ներկաներուն, որ եկեղեցին պէտք ունի հիմնական նորոգութեան: Ան հրաւիրեց Սրբազան Հայրը, որ իր սրտի խօսքը ուղղէ ներկաներուն:

Առաջնորդ Սրբազանը նախ գնահատեց Տիկնանց Միութիւնը, որ առանց ձայնի ու աղմուկի, սիրայօժար պատրաստեց այսօրուան մատաղը: Սրբազան Հայրը յիշեցուց ներկաներուն, որ իրենց նիւթաբարոյական ազնիւ նուիրատուութեամբ ու միասնական գործակցութեամբ է որ մեր բոլոր աշխատանքները, ինչպէս անցեալին, նոյնպէս եւ այսօր եւ գալիքին յաջողութեամբ պիտի պսակուին, ուստի, ըսաւ Սրբազան Հայրը, կոչ կ'ուղղեմ բոլորիդ, որ ուխտի վերանորոգութեան այս հանգրուանին, վերանորոգէք նաեւ Աստուծոյ տունը, որպէսզի Աստուած ալ ձեր ընտանիքները օրհնէ եւ ձեր կեանքերը ծաղկազարդէ:

Քրիստոնէական սիրոյ եւ հայաբոյր մթնոլորտի մէջ վերջ գտաւ օրուան հոգեպարար խորհուրդն ու սիրոյ ճաշը, որմէ ետք ներկաները տուն վերադարձան հոգեկան գոհունակ եւ ուրախ սրտով:

**Պարթեւ Վարդապետ**

ON THE FEAST OF FORTY MARTYRS DAY

THIS CHURCH HAS TO BECOME  
A NEW JORDAN RIVER

DECLARES H.E. ARCH. MOUSHEGH MARDIROSSIAN

On Sunday, March 26, 2006, His Eminence Archbishop Moushegh Mardirossian, Prelate, conducted Holy Mass at Orange County's Forty Martyrs Church on the occasion of the Feast of the Forty Martyrs and the name day of the Church. In his sermon, the Prelate stressed the necessity of prayer in each individual's family and public life as a means of reinvigoration, strengthening of faith, and communication with God.

During his sermon, the Prelate welcomed Very Rev. Muron Aznikian and Very Rev. Barthev Gulumian, Directors of the Prelacy Christian Education Department, who were serving at the altar. He also welcomed the parish priest Rev. Hrant Yeretjian, representatives of the Executive Council, past and present Board of Trustees, benefactors, Representatives, Ladies Auxiliary members, community organizations, servants of the church, and staff members of A.G. Minassian School.

Following Holy Mass and Requiem services, the Prelate, along with the clergy and choir members, walked in a procession to "Gugasian" Hall where he conducted the Blessing of the Offerings (*madagh*). At the end of the Agape blessing, more than 450 parishioners in attendance jointly sang "Cilicia" and "Mer Hayrenik".

During the luncheon, which was organized by the Ladies Auxiliary, the newly elected members of the Board of Trustees were introduced, after which Rev. Hrant Yeretjian expressed his thanks to the Prelate on behalf of the entire

parish and reminded the parishioners that the church needs fundamental renovations. He then invited the Prelate to express his thoughts on this occasion.

The Prelate began by commending the Ladies Auxiliary for preparing the *madagh*. He then reminded the attendees that it is with financial and spiritual assistance and cooperation that our endeavors are completed successfully, thus in this time of spiritual renewal we should also make a vow to renew the House of God.

The reception then came to a close with the parishioners returning home spiritually fulfilled and with peace in their hearts.